Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11003/25-ԱՑ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 1

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 3. Արարատ– ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025 - 31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.2025 -31.03.2025թթ. |
| Ներկայացման օր | 07.04.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Արմինե Մանուկյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում** սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 42 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է 2 դեպքի վարում /վերափաստագրման կազմակերպում/:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- **Ազատ ժամանցի կազմակերպման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը: Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 5 խմբակ, որոնց մասնակցել է 37 շահառու:
  Կենտրոնում գործող խմբակներն են՝
    - ✓ Երգ
    - ✓ Առողջարար ֆիզկուլտուրա
    - ✓ Գրական ակումբ
    - ✓ Կինոդարան
    - ✓ Հմուտ ձեռքեր

  Կազմակերպվել է թվով 4 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է ընդհանուր 42 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝
    - Կանանց միջազգային օրվա նշում
    - Հ. Թումանյանի ծննդյան և գիրք նվիրելու օրվան նվիրված գրական-երաժշտական ցերեկույթ, Արտաշատ համայնքի գրադարանի աշխատակիցների նախաձեռնությամբ, ովքեր միջոցառման մասնակիցներին նվիրեցի Հովհ. Թումանյանի քառյակներն ու բանաստեղծությունները «Քո բարեկամը այդ ես եմ՝ ԳԻՐՔԸ» մակագրությամբ:
    - «Արտիստը» ներկայացման դիտում Արտաշատի Ամո Խարազյանի անվան դրամատիկական թատրոնում:
    - Տյառնընդառաջի տոնի նշման մասնակցություն Արտաշատի Սուրբ Հովհաննես եկեղեցում:

- **Աշխատանքային/արտթերապիայի կազմակերպման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում թվով 32 շահառու մասնակցել է հոգեբանի կողմից իրականացված 9 խմբային հանդիպումներին:
  Հանդիպումներիը նվիրված են եղել տարեցների իմացական ֆունկցիաների մարզմանը, գլխուղեղի աշխատանքի խթանմանը: Իրականցվել են նեյրոբիկայի, հիշողության և ուշադրության կենտրոնացման բարելավման վարժություններ:
  Խմբային հանդիպումների ժամանակ կիրառվել են արտթերապիայի վարժություններ և տեխնիկաներ, այդ թվում. «Կյանքը որպես ճանապարհ», «Ազատ ստեղծագործություն», «Տրամադրության պատկեր», «Ձեր կերպարը», «Տրամադրություն», «Հոգու գույները», «Հեռվում»: Իրականացվել են նաև խմբային ինտերակտիվ քննարկումներ հետևյալ թեմաներով. ինքնագնահատական, ինքնախնամք, հուզական ոլորտ: Կիրառվել են որոշ թեստեր և հարցարաններ: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել սթրեսային իրավիճակներում աջակցելու, համապատասխան արձագանք տալու կարողություններ զարգացնելու գործընթացին, որոշակի տեխնիկաների տիրապետմանը:

- **Սննդի տրամադրման շրջանակներում** յուրաքանչյուր օր կենտրոնում սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Կանանց միջազգային օրվա նշում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/p/16HkhmcffC/?mibextid=wwXIfr),
- Հ. Թումանյան (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/p/1DouyUMvu3/?mibextid=wwXIfr ),
- Տեառնընդառաջ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/p/1EDLbvzxvG/?mibextid=wwXIfr ),
- Ներկայացման դիտում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/p/1F6LMP4EJF/?mibextid=wwXIfr)

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչընդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 42/40 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 30 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 8 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 7 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 8 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 32 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 40 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 42 |
| 4. | Հոգեբանական աշխատանքներ | 32 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 40 |
| 5.1 | Նշել խմբակի անվանումը՝ Երգ | 15 |
| 5.2 | Նշել խմբակի անվանումը՝ Ընթերցանության ակումբ | 10 |
| 5.3 | Նշել խմբակի անվանումը՝Առողջարար ֆիզկուլտուրա | 13 |
| 5.4 | Նշել խմբակի անվանումը՝ Կինոդարան | 7 |
| 5.5 | Նշել խմբակի անվանումը՝ Հմուտ ձեռքեր | 5 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 40 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 32 |
| 7. | Այլ ծառայություն (նշել) | |

Կազմակերպության ղեկավար Երվանդ Մխիթարյան 07. 04. 2025թ.

(ստորագրություն, անուն,ազգանուն)